Հաստատված է

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի

գիտական խորհրդի 2016թ. դեկտեմբերի 26-ի թիվ 20 նիստում

Գիտական խորհրդի նախագահ_____Ս. Ա. Առաքելյան

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲԱԺՆԻ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն կանոնադրությամբ սահմանվում են «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ) Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի (այսուհետ՝ Բաժին) գործունեության հիմնական ուղղվածությունը և դրույթները:

1.2. Կանոնադրությունը մշակված է ՀՀ «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքների, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության, կրթության որակի բնագավառում ԵՊՀ ԻՄ-ի քաղաքականության և որակի ներքին ապահովման գործընթացները կանոնակարգող այլ փաստաթղթերի հիման վրա:

1.3. Բաժինը ԵՊՀ ԻՄ-ի ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանում է, որի հիմնական նպատակը համալսարանում որակի ներքին ապահովման մեխանիզմների մշակումը և գործադրումն է, որակի շարունակական բարելավման մշակույթի խթանումը և կրթական ծառայությունների շուկայում բուհի բարձր մրցունակության ապահովումը:

1.4. Բաժինը սույն կանոնակարգով սահմանված խնդիրների լուծման նպատակով իր իրավասությունների սահմաններում համագործակցում է ԵՊՀ ԻՄ-ի այլ կառուցվածքային ստորաբաժանումների, ԵՊՀ-ի որակի ապահովման կենտրոնի, ՀՀ

մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամի և այլ կազմակերպությունների հետ:

1.5. Բաժինն ունի ԵՊՀ ԻՄ-ի խորհրդանշանով ձևաթուղթ (պաշտոնաթուղթ):

1.6. Բաժնի կողմից իրականացվող ԵՊՀ ԻՄ-ի որակի ներքին ապահովման գործընթացները ֆինանսավորվում են «ԵՊՀ ԻՄ-ի որակի ներքին ապահովման գործընթացների ֆինանսական ապահովման քաղաքականության» հիման վրա, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ և ԵՊՀ ԻՄ-ի կանոնադրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

2. *Բաժնի խնդիրներն ու գործառույթները*

2.1. Բաժնի խնդիրներն են.

2.1.1. Մշակել և պարբերաբար վերանայել ԵՊՀ ԻՄ-ի որակի ներքին ապահովման (ՈՆԱ) քաղաքականությունը ու ռազմավարությունը, ապահովել խորհրդատվական աջակցություն դրանց իրականցման բոլոր մակարդակներում:

2.1.2. ԵՊՀ ԻՄ-ի գործունեության բոլոր հիմնական ոլորտներում պահպանել որակի ապահովման արտաքին պահանջներին համապատասխան միասնական չափանիշները և ապահովել որակի ներքին ապահովման գործընթացների համապատասխանությունը նշված չափանիշներին:

2.1.3. Բարելավել որակի ներքին ապահովման գործընթացները՝ ապահովելով ներքին և արտաքին շահակիցների ընդգրկվածությունը:

2.1.4.Կազմակերպել որակի ներքին ապահովման գործընթացների հաշվետվողականությունը՝ աջակցելով ներքին և արտաքին շահակիցների առջև ԵՊՀ ԻՄ-ի հաշվետվողականությանը, նրանց տրվող տեղեկատվության թափանցիկությանը, մատչելիությանը և օբյեկտիվությանը:

2.1.5. Նպաստել մասնաճյուղում որակի ներքին ապահովման գործընթացներում գործընկերային և թիմային աշխատանքի միջավայրի ստեղծմանը:

2.1.6. Ստեղծել կանոնադրային և կազմակերպական հենք, ստորաբաժանումներին տրամադրել խորհրդատվություն մասնաճյուղի ինստիտուցիոնալ կարողությունների և իրականացվող կրթական ծրագրերի որակի արտաքին գնահատման գործընթացների վերաբերյալ:

2.1.7. Հաստատել և ամրապնդել կապեր հանրապետությունում և տարածաշրջանում գործող բուհերի ՈՆԱ կենտրոնների հետ:

2.2. Բաժնի գործառույթներն են

2.2.1. Մշակել ԵՊՀ ԻՄ ՈՆԱ գործընթացները կանոնակարգող փաստաթղթերը, համապատասխան մեխանիզմները և գործիքները, համակարգել ՈՆԱ գործընթացները մասնաճյուղում:

2.2.2. Սույն կանոնադրությամբ սահմանված իրավասությունների շրջանակում իրականացնել որակի ներքին ապահովման գործընթացներ, ուսումնասիրել և մշակել դրանց բարելավման առաջարկներ, զեկուցել դրանց արդյունքների մասին:

2.2.3. Աջակցել ԵՊՀ ԻՄ-ի բոլոր ստորաբաժանումներում որակի ներքին ապահովման գործընթացների մշակմանը, իրականացմանը և արդյունքների վերլուծությանը:

2.2.4. Ապահովել ՈՆԱ գործընթացների թափանցիկությունը՝ ներքին և արտաքին շահեկիցների գործուն մասնակցությամբ:

2.2.5. Իրականացնել ամենամյա տեղեկատվության հավաքագրում մասնաճյուղի գործունեության գնահատման առանցքային ցուցիչների /ԳԱՑ/ վերաբերյալ ինքնագնահատում և նրա արդյունքներից ելնելով առաջարկների մշակում:

2.2.6. Կազմակերպել ԵՊՀ ԻՄ-ի ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնագնահատման գործընթացը, զեկույցի պատրաստումը, նրա քննարկումը և հրապարակումը:

2.2.7. Համակարգել մասնաճյուղի ստորաբաժանումների աշխատանքը հավատարմագրող մարմինների փորձագիտական այցերի ժամանակ:

2.2.8. Ապահովել փորձագիտական խմբի եզրակացության քննարկումը և արդյունքներն օգտագործում որակի ներքին ապահովման գործընթացների բարելավման համար:

2.2.9. Պատրաստել մասնագիտության կրթական ծրագրերի մշակման, մշտադիտարկման և պարբերական վերանայման ընթացակարգեր, համակարգել և աջակցել դրանց իրականացմանը ԵՊՀ ԻՄ-ի ստորաբաժանումներում:

2.2.10. Համակարգել ԵՊՀ ԻՄ-ի կրթական ծրագրերի որակի ինքնագնահատումը և օժանդակում դրանց արտաքին գնահատման և հավատարմագրման գործընթացներին:

2.2.11. Մշակել դասավանդման, ուսումնառության և ուսանողների գնահատման մեթոդների արդյունավետության գնահատման գործիքակազմը (հարցումներ, ֆոկուս-խմբեր և այլն), իրականացնել գնահատումը և առաջարկել բարելավմանն ուղղված քայլեր:

2.2.12. Համագործակցել ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի որակի կառավարման մշտական հանձնաժողովի և որակի ապահովման ֆակուլտետային հանձնախմբերի հետ և աջակցում նրանց աշխատանքներին:

3. Բաժնի կառուցվածքը և կառավարումը

3.1. ԵՊՀ ԻՄ-ի մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի վարիչին նշանակում և պաշտոնից ազատում է տնօրենը՝ Որակի կառավարման հանձնաժողովի նախագահի միջնորդությամբ:

3.2. Բաժնի հաստիքացուցակը սահմանում և դրա մեջ փոփոխություններ է կատարում ԵՊՀ ԻՄ-ի տնօրենը՝ բաժնի վարիչի և որակի կառավարման հանձնաժողովի նախագահի առաջարկով:

3.3. Բաժնի վարիչը՝

3.3.1. պլանավորում, կազմակերպում, ղեկավարում և վերահսկում է Բաժնի ընթացիկ գործունեությունը,

3.3.2. ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի, տնօրենության և որակի կառավարման հանձնաժողովի նիստերին հանդես է գալիս հաշվետվություններով, զեկույցներով, տեղեկատվությամբ և համապատասխան առաջարկություններով,

3.3.3. իր լիազորությունների սահմաններում Բաժնի աշխատակիցներին տալիս է համապատասխան ցուցումներ և հանձնարարականներ Բաժնի գործառույթների իրականացման նպատակով, լուծում դրանցից բխող հիմնախնդիրները,

3.3.4. ապահովում է Բաժնի համագործակցությունը ԵՊՀ-ի որակի ապահովման կենտրոնի և մասնաճյուղի այլ ստորաբաժանումների հետ ,

3.3.5. ստորագրում է Բաժնի անունից պատրաստվող փաստաթղթերը, կատարում նշագրումներ,

3.3.6. Բաժնի լիազորությունների շրջանակներում նախապատրաստում է զեկուցագրեր, տեղեկանքներ, հաշվետվություններ, առաջարկություններ և այլ փաստաթղթեր,

3.3.7. առնվազն ամիսը մեկ անգամ հրավիրում է Բաժնի նիստեր, պարբերաբար կազմակերպում քննարկումներ, անհրաժեշտության դեպքում հրավիրում խորհրդակցություններ՝ ներքին և արտաքին շահակիցների ներգրավմամբ,

3.3.8. Բաժնի աշխատանքային պլանով նախատեսված գործընթացների արդյունավետության գնահատման նպատակով իրականացնում է վերլուծություն,

3.3.9. ԵՊՀ ԻՄ-ի տնօրենին ներկայացնում է առաջարկություններ Բաժնի աշխատակիցներին սահմանված կարգով խրախուսելու, կարգապահական տույժի ենթարկելու, վերապատրաստման և ատեստավորման անհրաժեշտության վերաբերյալ,

3.3.10. իր լիազորությունների սահմաններում ներկայացնում է Բաժինը մասնաճյուղից դուրս, Բաժնի աշխատանքները կազմակերպելու նպատակով հանդիպում է տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, նախապատրաստում է որակի ապահովման ոլորտի համագործակցության փաստաթղթեր՝ դրանք համաձայնեցնելով տնօրենի հետ,

3.3.11. կատարում է Բաժնի խնդիրների լուծման հետ կապված այլ աշխատանքներ,

3.3.12. պատասխանատվություն է կրում Բաժնի կողմից իրականացվող աշխատանքների որակի և Բաժնի առջև դրված խնդիրների հնարավորինս պատշաճ և արդյունավետ լուծման համար:

4. Կանոնադրության հաստատման և փոփոխության կարգը

4.1. Սույն կանոնադրությունը և նրանում կատարվող փոփոխությունները որակի կառավարման հանձնաժողովի ներկայացմամբ հաստատում է ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհուրդը: